



[ՀՀ բնապահպանության նախարարը աշխատանքային այցով եղել է ՀՀ Վայոց ձորի մարզում,](#) 29.09.2015

ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանն աշխատանքային այցով մեկնել է ՀՀ Վայոց ձորի մարզ: Մարզպետարանում անցկացված աշխատանքային խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, համայնքապետերը, մարզի ջրօգտագործող ընկերությունների տնօրենները և ՀՀ ԲՆ տարածքային բաժինների պետերը: Խորհրդակցության ժամանակ քննարկվել են մարզի բնապահպանական խնդիրները, մասնավորապես՝ որսագողության, փոքր ՀԷԿ-երի գործունեության հետ կապված համայնքներում ոռոգման, համայնքների աղբավայրերի և այլ հարցերը: ՀՀ բնապահպանության նախարարը ողջունելով ներկաներին՝ ներկայացրեց այն բնապահպանական խնդիրները, որոնց քննարկման անհրաժեշտություն էր առաջացել: Նշվել է, որ մարզի տարածքում կան որոշ ջրօգտագործողներ, այդ թվում նաև համայնքներ, որոնք չունեն, կամ առկա ջրօգտագործման փաստաթղթերը լիովին չեն համապատասխանում օրենքի պահանջներին: Բնապահպանության նախարարությունը պատրաստ է աջակցել վերջիններիս՝ համապատասխան մասնագիտական աջակցություն ցուցաբերելով ջրօգտագործման թույլտվությունները ձևակերպելու գործընթացում: Մարզի ջրօգտագործող ընկերությունների ղեկավարները հայտնել են, որ որոշ ՓՀԷԿ-երի անկանոն աշխատանքի արդյունքում ոռոգման շրջանում լինում է համայնքների ջրամատակարարման խափանման դեպքեր և ՀՀ բնապահպանության նախարարին խնդրել են աջակցել խնդրի լուծման հարցում: Նախարար Արամայիս Գրիգորյանը ԲՆ համապատասխան ստորաբաժանման ղեկավարին հանձնարարել է վերանայել հիշատակված փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունները և գործող օրենքների շրջանակում հարցին լուծում տալ՝ շեշտելով, որ ՀՀ կառավարությունն այսօր առաջնայնությունը տալիս է ոռոգման խնդիրների լուծմանը: Արամայիս Գրիգորյանը բարձրացրեց նաև աղբավայրերի հարցը՝ շեշտելով որ որոշ համայնքներում համապատասխան տարածքներում կատարվում է աղբահանություն, սակայն անհրաժեշտ է, որ ծավալվի լիցենզավորված գործունեություն: ՀՀ բնապահպանության նախարարությունը պատրաստ է աջակցել լիցենզավորման գործընթացն արագացնելու հարցում: ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն

Սարգսյանն առաջարկել է որոշ համայնքների աղբավայրերի խնդրի լուծմանն անդրադառնալ համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո, որպեսզի մի քանի համայնքներ աղբահանությունը իրականացնեն համակարգված:

Խորհրդակցության ժամանակ անդրադարձել է եղել նաև բնակավայրերի կոյուղաջրերի՝ գետեր թափվելու խնդրին: Արձանագրելով, որ ՀՀ բնապահպանության նախարարության լիազորություններն այդ խնդրում սահմանափակվում են միայն տեսչական վերահսկողությամբ՝ Արամայիս Գրիգորյանը հայտնել է, որ հարցը կբարձրացնի համապատասխան պատասխանատու գերատեսչությունների ղեկավարության հետ հանդիպումների ժամանակ: Անդրադառնալով մարզում գործունեություն ծավալող հանքարդյունաբերական ընկերությունների ստանձնած բնապահպանական պարտավորությունների կատարմանը՝ ՀՀ բնապահպանության նախարարը դրական է գնահատել Գեոթիմ ՓԲԸ-ի Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման առաջին փուլը, երբ ընկերությունն արդեն ռեկուլտիվացման վիճոցով վերականգնել է երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում առանձին տարածքներում խախտված բնական էկոլոգիական վիճակը:

Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարն այցելել է "Սաֆարի ինտերնացիոնալ" հայ-իտալական համատեղ ձեռնարկություն" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Շատինի դիտակետ, որտեղ ընկերության ղեկավարությունը ներկայացրել է տարածքում բեզոարյան ածերի թվաքանակի ավելացման տվյալները: Աղբյուրը՝ mnp.am, 29.09.2015